թեան, քեօֆխայութեան ՚ի բոլոր վիճակին յերևանու, պատուիրեմք քեզ զի քաղցրութեամբ կթեսցես պատուղ աշխարհին արարատեան ըստ Օրինօքն հայոց, եթէ հարկ, եթէ մաքս, եթէ հաս, և եթէ բաժին, և մուծանես ՚ի գանձարանն և շտեմարանն տանն հայոց, ՚ի վիճակի յերևանու և պատուիրեմք քեզ զի ՚ի գանձարանէ վիճակէ յերևանու հատուցանես ամսէ ամիս զօրագլուխ իշխանին որում իշխէ ՚ի վերայ զօրաց բնակելոց ՚ի յերևան, ռոճիկ զինուորաց և զօրագրլխաց մերոց հանդերձ ամենայն հարկաւորութեանց բերդին յերևանու, և ՚ի զօրագլխէ և բերդապանէ մերմէ ստանայցես ոսիդ և նոյն ոսիդ ՚ի տեղի տանուտերաց համարեսցի իբրև յատակ դրամ, և տուաք իշխանութիւն քեզ, զի պահել ՚ի մէջ ամենայն գաւառաց սահմանին յերևանու վարպետս զի ուսուսցէ ուստերաց և զրուտերաց ընթերցմունս և գրել հայոց տառիւ և բառիւ, և վարպետս զի ուսուսցէ ուստերաց արհեստն զինուորութեան, և պատուիրեմք քեզ զի լիքն պահեսցես շտեմարանն մեր անյապաղ հաց երկու ամաց վասն բոլոր բնակչաց ՚ի սահմանն յերևանու ՚ի ամուրս մեր, լեր պատրաստ ՚ի կառավարութիւնն քոյ, և հրամայեցաք քեզ զի հնազանդաբար յանձն առնուցուս ընդդէմ ամենեցուն մտանել ՚ի դատաստան, և ըստ Օրինօք վճռաց հնազանդիլ աննախանձաբար, և տուաք